ԿԱՐԾԻՔ

Գարեգին Սահակի Թումանյանի կողմից պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ներկայացված «Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհի արևելքում» (ըստ հնագիտական տվյալների) խորագրով ատենախոսության վերաբերյալ

Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցող՝ հնագետ, պատմ. գիտ. թեկնածու Գարեգին Սահակի Թումանյանի «Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհի արևելքում» (ըստ հնագիտական տվյալների) ատենախոսության թեման ու բովանդակությունը, կապված կիմերասկյութական մշակութային հանրության ձևավորման հիմնախնդիրների վերհանման ու արժևորման հետ, ինչպես տարիներ առաջ, այնպես և այսօր, շատ կարևոր են ու արդիական մերձսևծովյան, ընդհանուր կովկասյան, հինմերձավորարևելյան (այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի) և միջինասիական տարածաշրջանների, մ.թ.ա. I հազ. բարդ, խառը և հակասական պատմամշակութային իրողությունների գիտական մեկնաբանման համար:

Սա հեղինակի գիտագործնական և գիտահետազոտական բազմամյա քրտնաջան աշխատանքի արդյունքն է, որում տեղ են գտել բազմաթիվ նոր, տակավին չհրատարակված և, ըստ էության, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտնող փաստացի նյութեր դատողություններ ու մեկնաբանություններ: Ըստ հեղինակի սեղմագրի՝ «...աշխատությունը միտված է վաղուց ձևավորված հնագույն հայկական մշակույթից հին հայկականին անցման գործընթացներում կիմերական և սկյութական բաղադրիչների դերը վերհանելուն և արժևորելուն»:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, հինգ գլուխներից (որոնցից յուրաքանչյուրն ունեն իրենց ենթագլուխները), երգրակացություններից, գրականության ցանկից և համառոտագրություններից: Տեքստի շարադրանքը կազմում է A4 ֆորմատի 294 համակարգչային էջ: Աշխատանքը համալրված է նաև 2 հավելվածներով, որոնցից առաջինում ներառված են քննարկվող տարածաշրջանի հնագիտական հուշարձանների ամփոփ քարտեզը, 28 նկարներ ու 73 աղյուսկներ (101 էջ), իսկ երկրորդում՝

վիճակագրական աղյուսակները (12 էջ): Այսպիսով ընդհանուր աշխատանքը 407 համակարգչային էջ է:

Ներծության մեջ (էջ 4-18) ատենախոսության հեղինակն անդրադարձել է թեմայի ուսումնասիրվածության արդի վիճակին, հիմնախնդիրների շուրջ տարբեր մասնագետների (Բ. Պիոտրովսկի, Ա. Յեսսեն, Հ. Մարտիրոսյան, Գ. Տիրացյան, Ս. Եսայան, Մ. Պոգրեբովա, Ի. Մեդվեդսկայա, Ե. Չերնենկո, Ս. Մախորտիխ, Ա. Իվանչիկ և այլք) առաջ քաշած մեկնաբանություններին, հիմնահարցի արդիականությանը, սկզբնաղբյուրներին, քննարկվող հարցերի տարածաժամանակագրական սահմաններին, օգտագործված մեթոդաբանությանը, աշխատանքի գործնական նշանակությանը և այլն:

Ատենախոսության I գլուխը կրում է «Պատմական տեղեկություններ» խորագիրը և ընդգրկում է 19-54 էջերը: Այն ստորաբաժանված է երեք ենթագլուխների կամ բաժինների, որոնցից առաջինում ի մի են բերված և մեկնաբանված հիմնախնդիրներին առնչվող սեպագիր (նորասսուրական, ուրարտական) սկզբնաղբյուրները: Հատկապես մանրամասը քննարկված են Իշքիգուլու (Իշքիգուլխի) երկրի առաջնորդ Shaga DUNU tara-ի կամ Shagashtara-ի և Մովսես Խորենացու հայոց մեծաց անվանացանկում հիշատակվող Սկայորդու համադրության (ըստ ամենայնի նաև նույնականության) խմդիրներն ու դրան առնչվող ռազմաքաղաքական վերլուծությունների համախումբը:

Երկրորդ ենթաբաժնում ներկայացված են Աստվածաչնչում և անտիկ դարաշրջանի ու վաղ միջնադարի տարբեր պատմիչների (Հերոդոտոս, Քսենոֆոն, Դիոդորոս Սիկիլիացի, Ստրաբոն, Մովսես Խորենցի, Ագաթանգեղոս, Պրոկոպիոս Կեսարացի, Մովսես Կաղանկատվացի և այլք) գործերում հիշատակությունները տարածաշրջանում և, մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում կիմերների ու սկյութների գտնվելու նաև վերջիններիս ծագումնաբանական որոշ խնդիրների մասին:

Ատենախոսության II գլուխը կրում է «Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի դամբարանները, որոնք կարելի է վերագրել կիմերասկյութական մշակութային ընդհանրությանը» խորագիրը (էջ 55-114): Այս գլուխը ևս կազմված է 3 ենթագլուխներից կամ բաժիններից: Առաջին ենթագլխում ներկայացված են Հայկական լեռնաշխարհի կիմերասկյութական դամբարանային համալիրների առանձնացման հիմնական չափորոշիչները (տղամարդկանց անհատական և/կամ խմբային թաղումներ, մեջքի վրա պառկած կմախքների փաստագրում, ձիերի, ասպազենի, զենքի, զրահի, ձիասարքի,

փոխադրամիջոցների առանձին մասերի և/կամ մանրակերտերի առկայություն, տղամարդու աշխատանքային գործիքների օրինակներ, մարդակերպ քարե արձան-կոթողներ և այլն): Ըստ որում, այս ամենն իրականացվել է վիճակագրական մանրամասը վերլուծությունների ճանապարհով:

Այս գլխի երկրորդ ենթագլխում, հաշվի առնելով խնդրո հարցերի ուղղությամբ մի շարք հնագետների (Բ. Կուֆտին, Ա. Յենսսեն, Յու. Վորոնով, Մ. Պոգրեբովա, Ա. Տերենոժկին, Ե. Չերնենկո, Ս. Մախրոտիխ, Ս. Եսայան և այլք) ուսումնասիրությունների արդյունքները, հեղինակն արդեն իր կողմից առանձնացված հատկանիշների համատեքստում իրականացրել է դամբարանների մշակութային պատկանելության մեկնաբանություններ, դրան զուգահեռ փորձելով վերանայել և հիմնավորել (գոնե թե Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջանների համար) երկաթի դարաշրջանի լայն տարածման փուլին առնչվող ժամանակային սահմանների ստորին շեմի «հնեցման» խնդիրը:

Այս գլխի երրորդ ենթագլխում արդեն հեղինակն անդրադարձել է Հայաստանի և Արցախի հանրապետությունների, ժամանակակից Վրաստանի, ժամանակակից Ադրբեջանի տարածքներում բացված և, ըստ ատենախոսության մեջ մշակված հատկանիշներով, կիմերասկյութական մշակութային ընդհանրությանը վերագրվող համապատասխան դամբարանային համալիրների հանգամանալի ուսումնասիրությանը՝ ներառյալ դրանց ձևերի, կառուցման եղանակների, տեղադրված գույքակազմի (զենք, զոհաբերված կենդանիներ, խեցեղեն, աշխատանքային գործիքներ, պերճանքի առարկաներ և այլն), կմախքների դիրքի, վերջիններիս սեռատարիքային առանձնահատկությունների և այլ հատկանիշների մանրազնին դիտարկման աշխատանքները:

Ատենախոսության III գլուխը նվիրված է Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի դամբարանադաշտերից հայտնաբերված, մ.թ.ա. VIII դ. վերջ – մ.թ.ա. VII դ-ին վերաբերող համապատասխան համալիրներին և կրում է «Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի կիմերասկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով դամբարանները» անվանունը (էջ 115-182): Այս գլուխը ստորաբաժանված է 4 ենաթագրուխների (բաժինների): Այստեղ արդեն համապատասխան ենթագլուխներում հաջորդաբար ներակայացված են և մանրամասը քննարկված դամբարանային կառույցների, թաղման ծեսի, ծիսակարգի առանձնահատկությունների, զոհաբերությունների, զոհված

կենդանիների տեսակների, դամբանախցի գույքակազմի դասավորության, տեսականու, դրանցից յուրաքանչյուրի իմաստային ծանրաբեռնվածության, խեցեղենի բնորոշ տեսակների, դրանց քանակի և այլ հարցեր: Հատկապես մանրազնին անդրադարձ է կատարվել հարձակողական (աղեղներ, նետասլաքներ, նիզակներ, քլուգաձև սակրեր, տեգեր, ակինակ-դաշույններ, գուրզեր, կեռ դանակներ և այն) և պաշտպանական զինատեսակների (գոտիներ, լանջապանակներ), ինչպես նաև ասպազենի (սանձեր, լկամներ, ձիափոկի ամրակներ և այլն) օրինակներին: Նշված նյութերի առավել հավաստի և անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող մասը ենթարվել է նաև վիճակագրական մանրամասը վերլուծությունների, համադրությունների ու մեկնաբանության:

Ատենախոսության IV գլուխը կրում է «Հնագիտական տարաբնույթ տվյալներ» խորագիրը (էջ 183-213): Այն կազմված է երեք ենթագլխից (բաժնից): Առաջին ենթագլխում դիտարված են վիճակագրական Բ աղյուսակում ներառված դամբարանային համալիրները: Բանն այն է, որ ատենախոսի կողմից նախորդ գլուխներում ներառված ու դիտարկված համալիրների շարքում չեն դիտարկվել այն դամբարանները, որոնք թեև ունեն կիմերասկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ հատկանիշներ, սակայն հատուկ դուրս են թողնվել այն հիմնավոր պատճառով, որ համապատասխան հրատարակություններում ներկայացված են ընդհանուր համախբի սկզբունքով և, ըստ այդմ, ընդհանրական այդ տեղեկատվության մեջ հիմնականում հնարավոր չէ առանձնացնել անհրաժեշտ համալիրի կոնկրետ հատկանիշները: Այսուհանդերձ, սրանք ևս կարևոր պատմամշակութային սկզբնաղբյուր են և, հեղինակը դիպուկ կերպով դրանք, ըստ էության, ավելի սակավ (ընդամենը 5) առանձնացող հատկանիշներով խմբավորել, հաշվարկել և դիտարկել է վիճակագրական Բ աղյուսակում:

Նույն գլխի երկրորդ ենթագլխում ատենախոսը քննության է առել մ.թ.ա. I հազ. կեսով թվագրվող հնագիտական բնակավայրերում (Էրեբունի, Արգիշթիխինիլի, Օշական, Շիրակավան, Օձաբերդ, Շիկահող, Գեղանուշ, Կապան և այլն) կիմերասկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով առանձնացող համալիրների առկայության ու թվագրության խնդիրները: Այս գլխի վերջին ենթագլխում էլ քննարկված են ժամանակին դամբարանների վրա տեղադրված, իսկ ներկայումս առավելապես տեղաշարժված քարե կոթող-մահարձաններին վերաբերող խնդիրները: Ըստ որում վերջիններս դիտարկված են տարածական լայն սփռվածություն ունեցող համապատասխան զուգահեռների

համատեքստում, ինչն առավել ամբողջական ու հավաստի է դարձրել եզրահանգումների ու մեկնաբանությունների արդյունքը:

Ատենախոսության վերջին V գլուխը նվիրված է քննարկվող հիմնախնդիրների լեզվադիցաառապելաբանական մեկնաբանությունների ոլորտին և կրում է «Լեզվաբանական և առասպելաբանական որոշ ընդհանրություններ» վերնագիրը (էջ 214-235): Այստեղ արդեն քննարկված են դարավոր շփումների արդյունքում սկյութերենից հայերենին (անկասկած նաև հայերենից սկյութերենին) բառարմատների, հատուկ անունների և առասպելաբանական սյուժեների փոխանցման երկկողմանի վեկտորի հնարավոր առկայության պարագան: Ձեռքի տակ ունենալով XX դ. մեծանուն լեզվաբաններ Հր. Աճառյանի, Գր. Ղափանցյանի, Գ. Մելիքիշվիլու, Ի. Դյակոնովի, Վ. Աբաևի, Գ. Ջահուկյանի, Ժ. Դյումեզիլի, Ն. Հարությունյանի, Վ. Իվանովի, Թ. Գամկրելիձե հիմնարար մենագրությունները, ինչպես նաև օգտվելով մեր ժամանակակիցներ Ա. Պետրոսյանի և Գ. Դալալյանի աշխատանքներից, հեղինակը ներկայացրել է բառարմատային, անվանաբանական և առասպելաբանական շատ ուշագրավ ընդհանրություններ և փոխազդեցություններ: Մասնավորապես խիստ ուշագրավ են **baxta** – **բախտ**, **kuti** (շուն) – **քութի** կամ **կուտիկ** (շան ձագ), **bazu** – **բազուկ** (ձեռք), սկյութեն և հայերեն նույնիմաստ բառերի զուգորդումները: Նույն կերպ տպավորիչ են **կիմերների** անվանումից սերվող **Կումայրի**, **սակերի** էթնանունից՝ **Սակաշեն-Շակաշեն**, սիրակ ցեղի անունից՝ **Շիրակ**, **Արդարակոս** անձնանունից – **Արդարաքիխի** (ուրարտական) և այլ անունների համադրությունները:

«Եզրակացություններ» խորագիրը կրող վերջաբանում (էջ 236-244) հիմնավորապես ի մի են բերված ատենախոսության նախորդ գլուխներում արված բոլոր եզրահանգումներն ու մեկնաբանությունները:

Անուրանալի է, որ ատենախոսի կողմից կատարվել է երկարամյա, մանրակրկիտ, հիմնարար, քրտնաջան ու հույժ գիտական աշխատանք, որ միանշանակ արժանի է դրվատանքի: Այս առումով անհրաժեշտ ենք համարում հաջորդաբար թվարկել այն կարևոր ձեռքբերումները, որ փաստացի առկա են ատենախոս Գարեգին Սահակի Թումանյանի սույն ատենախոսության մեջ:

• Առաջին անգամ նման բնույթի աշխատության մեջ, հնագիտական ստվարածավալ փաստացի նյութի հիման վրա հանգամանալի ուսումնասիրված են կիմերասկյութական մշակութային ընդհանրությանը վերաբերող բազմաբնույթ հիմնահարցերը:

• Ատենախոսությունը գրված է անթերի հայերենով, ինչն առավել հատկանշական է նման տերմինաշատ և բարդագույն աշխատանքների համար:

• Աշխատանքն իրականացվել է օգտագործելով հրապարակի վրա առկա հայ և օտարալեզու մասնագիտական գրականության ճնշող մեծամասնությունը: Ատենախոսության մեջ կիրառվել է 595 անուն մենագրություն, հոդված ու հրապարակում:

• Այն շարադրված է Հին Մերձավոր Արևելքի, մերձսևծովյան, կովկասյան և միջինասիական համաժամանակյա փաստացի նյութի և ընդգրկուն պատմամշակութային համայնապատկերի վրա, ինչն աշխատանքը դարձնում է առավել հիմնավոր, հավաստի ու փաստառատ:

• Աշխատանքը համալրված է 2 հավելվածներով, որոնցից առաջինում ներառված են քննարկվող տարածաշրջանի հնագիտական հուշարձանների ամփոփ քարտեզ, 28 նկարներ ու 73 աղյուսակներ, իսկ երկրորդում՝ 12 էջ կազմող վիճակագրական աղյուսակներ:

• Հատկանշական է, որ ատենախոսության մեջ կիրառված վիճակագրական մանրամասը վերլուծություններն առավել ամբողջական ու ընկալելի են դարձնում աշխատանքը:

• Աշխատանքում տեղ գտած բազմաթիվ եզրահանգումներն ու մեկնաբանությունները հնարավորություն են ընձեռում նորովի դիտարկելու Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի պատմությանն ու մշակույթին առնչվող բազմաթիվ իրողություններն ու գործընթացները տարածաշրջանում կիմերասկյութական էթնիկ տարրի երկարատև տեղաշարժերի պայմաններում:

Իրապես շատ բարձր գնահատելով Գարեգին Սահակի Թումանյանի հույժ գիտական ատենախոսությունը, այսուհանդերձ կցանկանայինք ներկայացնել մի քանի առաջարկություններ, որոնց դիտարկումն ու հնարավոր կիրառումը, մեր կարծիքով, ավելի շահեկան կդարձներ ատենախոսությունը:

1. Կարծում ենք, որ ներկայացված ատենախոսությունն առավել հագեցված, հիմնավոր ու ամբողջական կլիներ եթե նրանում օգտագործված լինեին հետևյալ հրատարակությունները:

ա) **N. L. Členova**, *On the Degree of Similarity between Material Culture Components Within the "Scythian World"*, in: "The Archaeology of the Steppes: Methods and Strategies", Napoli 1994, pp. 499-540.

բ) **L. T. Jablonskij**, *The Early Cattle-Breeders of the South-Aral Area: Culture, Craniology, Language*, in: "The Archaeology of the Steppes: Methods and Strategies", Napoli 1994, pp. 360-378.

2. Սակասկյութական էթնիկ տարրին առնչվող Աստվածաշնչի, անտիկ հեղինակների ու վաղմիջնադարի հայ պատմագիրների սկզբնաղբյուրների հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում կարծում ենք, որ, թերևս, չէր խանգարի, եթե օգտագործվեր ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 2001 թ. հրատարակված «Հայոց սրբերը և սրբավայրերը» ժողովածուում զետեղված Ռուզան Մկրտչյանի և մեր հոդվածը՝ «Ասքանազյան ազգի և Թորգոմի տան ժառանգաբանական խնդիրների շուրջ» վերնագրով (էջ 383-394): Առավել ևս, որ այնտեղ առաջին անգամ վիճակագրական եղանակով հաշվարկված են սկյութական մարդաբանական նյութերի մասին համեմատական մեծաքանակ տվյալներ:

3. Թեև բարձրացվող հարցը հակասական մեկնաբանություններ կարող է առաջացնել, այսուհանդերձ, ատենախոսին կառաջարկեինք, հնարավորության դեպքում հետագայում ուշադրություն դարձնել նաև Երվանդ Սակավակյացի անվան երկրորդ բաղադրիչի ստուգաբանության մի տարբերակի վրա, ըստ որի «Սակավակյաց» կարող է նշանակել նաև «սակերի օգնությամբ կամ միջոցով իշխանության եկած», «սակերի օգնությամբ կեցած»՝ այսինքն, Վանի թագավորության (Ուրարտու) անկումից հետո, խառնակ ժամանակներում, քոչվող, վարձկան սակական զորաջոկատների օժանդակությամբ գերիշխանության հաստատած իշխանավոր: Ամեն դեպքում այդ մասին մենք մեկնաբանություն ունենք 2015 թ., Մեծամորի պեղումների 50-ամյակին նվիրված «Մեծամոր. պատմամշակութային ակնարկ» խորագրով գրքույկում:

4. Չենք կարող համաձայնվել նաև ատենախոսության մեջ հեղինակի առաջ քաշած այն մտքին (էջ 319), թե կիմմերներներնին ու սկյութներին է պարտական Հին Արևելքը երկլիճ, կոր ծայրերով, ոչ մեծ (այսպես կոչված՝ բարդ տիպի) աղեղներին ծանոթանալու համար: Այդ տիպի երկլիճ աղեղները Հայկական լեռնաշխարհում և մասնավորապես Սևանի ավազանում հայտնի էին արդեն մ.թ.ա. XV դ. և վկայված են տեղի իշխանական դամբարաններում:

Դրանք պատկերված են նաև գրեթե այդ ժամանակաշրջանին վերաբերող լճաշենյան բրոնզե գոտիների վրա:

5. Վատ չէր լինի նաև, եթե անձնավանական և տեղանվանական որոշ զուգահեռներ ներկայացվեին ոչ միանշանակ, այլ տրվեին նաև դրանց ստուգաբանությունների ու մեկնաբանությունների այլ տարբերակները ևս: Խոսքը մասնավորապես վերաբերում է Կումայրի տեղանվանը, որը ոչ միայն կապվում է կիմերների հետ, այլ մեկնաբանվում է նաև ժայռափոր կացարանների բնակավայր անվանական տարբերակով (Ս. Պետրոսյան):

Արված առաջարկությունները բացառապես խոհրդատվական բնույթ ունեն և ոչնչով չեն ստվերում կամ նսեմացնում կատարված հսկայածավալ և հիմնարար աշխատանքը: Այն լիովին համապատասխանում է դոկտորական ատենախոսություններին ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության սեղմագիրը և նրանում ներկայացված հապարակումները ներկայացնում է աշխատանքի ամփոփ և համառոտ շարադրանքը: Ուստի ատենախոս Գարեգին Սահակի Թումանյանը միանգամայն արժանի է հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի վարիչ՝ պրոֆ. Ա. Փիլիպոսյան

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փիլիպոսյանի
ստորագրությունը հաստատում եմ:
ՀՊՄՀ գիտ. քարտուղար դոց. Մ. Իսպիրյան

02. 06. 2021 թ.